«Կրոկուս Սիթի Հոլ». իսկ ո՞վ է դա արել

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 25.03.2024թ.

2024 թ. մարտի 25-ին մի շարք ռուսական Telegram-ալիքներ հայտնել են, որ ռուսական և թուրքական հատուկ ծառայությունները համատեղ գործողություն են իրականացրել Ստամբուլի մերձակայքում գործող ԻԼԻՊ-ի ճամբարները ոչնչացնելու համար, որտեղ, իբր, վերապատրաստվել են «Կրոկուս Սիթի Հոլ»-ում ահաբեկչություն իրականացրած զինյալները: Սակայն, այս լուրի հրապարակման պահին ՌԴ պաշտոնական ալիքներն ու մերձիշխանական լրատվամիջոցները լռում էին՝ ո՛չ հաստատելով և ո՛չ էլ հերքելով այդ տեղեկությունը:

Այս առումով մի շարք հարցեր են ծագում, որոնց պատասխանները, հաշվի առնելով պաշտոնական Մոսկվայի լռությունը, ստիպված ենք ինքնուրույն փնտրել:

Նախ, եթե վերը նշված լուրերը հավաստի են, ապա չի կարող զարմանալի չթվալ, որ կարճ ժամանակում զինյալների հետ միասին ոչնչացվել են ԻԼԻՊ-ի ճամբարները: Սովորաբար, նման դեպքերում հակաահաբեկչական պրակտիկան չի ենթադրում ահաբեկիչների ֆիզիկական ոչնչացում, ինչպես դա եղավ, օրինակ, ԹՀ-ում ՌԴ դեսպան Կառլովի սպանության դեպքում, այլ նրանց ծրագրերի չեզոքացում, ահաբեկիչներին ողջ և, հնարավորության դեպքում, անվնաս պահելով՝ համապատասխան քննչական գործողություններ իրականացնելու նպատակով: Հակառակ դեպքում, տպավորություն է ստեղծվում, որ հիշյալ գործողությունը պարզապես «հետքերը կորցնելու» կամ «կապերը կտրելու» նպատակ ուներ:

Երկրորդ, տարակուսելի է այսքան կարճ ժամանակահատվածը, որի ընթացքում, իբր, բացահայտվել են Թուրքիայում գտնվող ԻԼԻՊ-ի «Վիլայաթ Խորասանի»՝ Մոսկվայում ահաբեկչություն իրականացրած «մնացուկները», և, համապատասխանաբար, լայնածավալ գործողություն է իրականացվել կայծակնային արագությամբ դրանց ոչնչացնելու ուղղությամբ: Նման գործողություններին մեկ օրում չեն նախապատրաստվում, ինչը նշանակում է, որ ԻԼԻՊ-ի «բների» տեղակայումը և դրանց գործունեությունը նախապես հայտնի է եղել, իսկ «բացահայտված» մասնաճյուղերի վերացման մանրամասն գործողությունների ծրագիրը մշակվել է նախապես: Իսկ դա, իր հերթին, վկայում է այն մասին, որ թուրքական հետախուզական ծառայությունները քաջատեղյակ են եղել այդ կառույցների գործունեության առանձնահատկություններին, եթե, իհարկե, հենց իրենք չեն վերահսկել դրանց աշխատանքը:

Եվ, վերջապես, երրորդ, տարակուսելի է, որ լավագույն կիրառմանն արժանի համառությամբ «թուրքական տարբերակը» մերժվել է ռուս քաղաքական գործիչների, քաղաքագետների և լրագրողների կողմից, որոնք ողողել են եթերը «Կրոկուս Սիթի»-ի

իրադարձություններում ուկրաինական, ամերիկյան, բրիտանական և, նույնիսկ, հայկական հետքերի մասին խոսույթներով: Ավելին, ռուսական ԶԼՄ-ներում չափից ավելի անպատեհ միտում էր նկատվում ամեն առիթով հիշեցնելու, որ ԹՀ-ի և և ԱդրՀ-ի իշխանությունները առաջիններից էին ռուսական կողմին ցավակցական ուղերձներ հղողների թվում: Ինչն, ի թիվս այլ հանգամանքների, նաև հուշում է, որ թուրք-ադրբեջանական երկյակը սկսել է աղմուկ բարձրացնել անմիջապես այն բանից հետո, երբ Բրյանսկում բերման են ենթարկվել գործով առաջին կասկածյալները, ովքեր տեսախցիկի առաջ ցուցմունք են տվել Թուրքիայում իրենց պատրաստության մասին:

Ռուսական կողմի «թուրքական հետքի» «անհասկանալի» անտեսումը հանգեցնում է Մոսկվայի կողմից օբյեկտիվ փաստերը միտումնավոր ճնշելու մասին եզրակացության, քանի որ այդ վարկածը պիտի քննարկվեր առաջին իսկ ժամերից: Տպավորություն է ստեղծվում, որ Ռուսաստանի իշխանությունները, ավելի ճիշտ՝ նրանց որոշակի շրջանակներն ու գերատեսչությունները, փորձում են շեղել հասարակության ուշադրությունն ու արդար զայրույթը «Կրոկուս Սիթի»-ում ահաբեկչության իրական պատվիրատուից կամ գոնե այս մարդատյացության գործողության գլխավոր դերակատարներից մեկից:

Այս առումով դժվար է չանդրադառնալ նախորդ հոդվածներից մեկում մեր արձանագրմանը և ռուսական որոշ գերատեսչությունների ընդգծված թուրքամետ գծի մասին հուշող մռայլ եզրակացություններին: